ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1953 Общественные науки

Ա. Մ՝իրզոյան

ԵՐԵՎԱՆԻ 1724 Թ. ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԶԱՎԹԻՉՆԵՐԻՑ

Երևանի 1724 թվականի հերոսական պաշտպանությունը թյուրքական զավթիչներից հայ ժողովրդի ազատության ու անկախության պայքարի պատմության փայլուն էջերից մեկն է։

Այդ հերոսամարտի միակ աղբյուրը, եթե նկատի չունենանք մեր ձեռագրերի հիշատակարաններում եղած լրացուցիչ տվյալները, դեպքերին ժամանակակից Աբրահամ Երևանցու թողած «Պատմութիւն պատերազմացն» ուշագրավ աշխատությունն է, որն առաջին անգամ լույս տեսավ 1938 թվականին, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի (Արմֆանի) հրատարակչության կողմից։ Այդ պատմությունը դեռևս ձեռագիր վիճակում և նրա հրատարակելուց հետո հայ պատմագրության մեջ մի շարք մասնագետների կողմից օգտագործվել է, բայց, այնուամենայնիվ, Երևանի 1724 թվականի հերոսական պաշտպանության պատմությունը դեռևս բազմակողմանիորեն չի լուսաբանվել[1]։

Երվանդ Շահազիզը, որը սովետական շրջանում գրել է հին Երևանի պատմությունը, ձեռքի տակ չունենալով Աբրահամ Երևանցու աշխատությունը, ինչպես այդ խոստովանում է ինքը, օգտվել է Ղ. Ալիշանի «Այրարատի» մեջ ծանոթագրության կարգով մեջ բերված հիշատակությունից, Երևանի 1724 թ. պաշտպանությանն անդրադարձել է մասնակիորեն ու կցկտուր։

Պրոֆ. Լեոն Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» աշխատանքի բնագրի պատճենը, անտիպ, իր տրամադրության տակ ունենալով, իր «Հայոց պատմության» երրորդ հատորում համեմատաբար մանրամասն նկարագրել է 1724 թվականին Երևանի պաշտպանության պատմությունը, սակայն նա գերազանցապես կանգ է առել այդ պատմության պատերազմական գործողությունների նկարագրության վրա, առանց պատշաճ ուշադրություն դարձնելու Երևանի բնակչության սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր պայմանների վրա, որոնցից ազատագրվելու համար Երևանի բնակչությունն անձնուրաց ու հերոսական դիմադրություն էր ցույց տալիս թյուրքական զավթիչներին։

Նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները, և ձեռքի տակ ունենալով Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռագրերի հիշատակարաններից լրացուցիչ տվյալներ, որոնք մեր պատմագրության մեջ մինչև այժմ չեն օգտագործվել, մենք ձեռնամուխ եղանք Երևանի 1724 թ. հերոսամարտի պատ-

---

[1] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 303։ Լեո, Պատմութիւն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 71—73։ Հայոց պատմություն, հատոր 3-րդ, Երևան, 1946, էջ 640—643։ Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 322—324։ Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 105—108 և այլն։

մության շարադրմանը՝ նպատակ ունենալով ավելի ամբողջական ու բաղմակողմանիորեն լուսաբանել այդ հարցը։

* * *

Մինչև Ռուսաստանին միակցվելը Երևանը բազմիցս ենթարկվել է օտարերկրյա զավթիչների ավերիչ արշավանքներին։ 16-րդ դարի սկզբից սկսած պարսկա-օսմանյան բռնապետությունների անընդմեջ պատերազմների ժամանակամիջոցում Երևանը շատ անգամ նվաճվել, ավերվել ու կողոպտվել է։ 326 տարվա ընթացքում՝ այսինքն 1501 թվականից մինչև 1827 թվականը, Երևանը 15 անգամ ձեռքից ձեռք է անցել։ Այդ ժամանակաընթացքում Երևանում իշխել են 40-ից ավելի պարսկական խաներ, սարդարներ ու օսմանյան փաշաներ։ 1639 թվականից մինչև 1827 թվականը Երևանը մեծ մասամբ գտնվել է պարսկական բռնակալների տիրապետության տակ։

Երևանն Արևելյան Հայաստանի պարսկական խանության կենտրոնն էր։

Այդտեղ էին նստում պարսկական շահերի կողմից նշանակված խաներն ու սարդարները։

Երևանի բնակչության թիվը հնագույն ժամանակներից մինչև Հայաստանն Ռուսաստանին միակցվելը մեզ հայտնի չէ։ Սակայն մի բան պարզ է, որ քաղաքական ծանր իրադրության պայմաններում, հայ ժողովուրդն իր ֆիզիկական գոյությունն ու անկախությունը պաշտպանելու համար օտար զավթիչների դեմ անհավասար մարտերում մեծ զոհեր է տվել։ Ակնհայտ է, որ հաճախակի կրկնվող կոտորածները, գերևարությունները, սովն ու աղքատությունը սիստեմատիկ կերպով նվազեցրել են Հայաստանի, այդ թվում և Երևանի բնակչության թիվը։ Եթե 1828 թվականին՝ Հայաստանը Ռուսաստանին միակցվելու ժամանակ Ի. Շոպենի տվյալներով Երևանի բնակչության թիվը հասնում էր մոտ 12 հազարի[1], ապա պարզ է, որ պարսկա-օսմանյան հիշյալ պատերազմներից առաջ Երևանի բնակչության թիվն ավելի քան շատ է եղել։

Երևանի աշխատավոր բնակչությունը մի կողմից կողոպտվում ու շահագործվում էր օտար բռնակալների՝ սարդարների, խաների ու նրանց պաշտոնյաների, իսկ մյուս կողմից տեղական մելիքների, աղաների ու հոգևորականների ձեռքով։ Գյուղի և քաղաքի աշխատավորությունն իր բերքի մեկ հինգերորդը վճարում էր որպես արքունական հարկ (բահրա), իսկ մեկ տասերորդը՝ որպես հողային ռենտա (մուլք)[2]։ Այդ բնահարկերից բացի՝ գյուղի և քաղաքի աշխատավորությունը վճարում էր նաև մի շարք ուղղակի ու անուղղակի հարկեր և ուներ բազմաթիվ պարտավորություններ, որոնց մեջ ամենածանրը հանդիսանում էր կոռն ու բեգյարը։ Զաքարիա Սարկավագի վկայությամբ Երևանի խանության մեջ Ամիրդունախանի ժամանակ այնքան էր ուժեղացել կոռը, որ նրա մասին ասում էին. «...Կին հղի գոլով՝ այր նորա տանէին կոռ, և ոչ թողուին գնալ ի տուն իւր. և կինն ծնանէր որդի և զարգանայր, և առաքէին զնա՝ ի կոռն. զի հայրն երթիցէ ի տուն»[3]։

Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում և հայերը, բացի ընդհանուր հարկերից, որպես «այլադավան-

[1] И. Шопен, Историческій памятник состояния армянской области в эпоху ее присоединения к Российской империи". СПб, 1852, стр. 468.

[2] Սիմոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 159։

[3] Զաքարիա Սարկավագ, Պատմութիւն, Վաղարշապատ, 1870, հատոր Ա, էջ 40։

ներ» վճարում էին նաև գլխահարկ։ Եսայի Ջալալյանի վկայությամբ 1699—1702 թթ. Անդրկովկասում կատարված աշխարհագրից հետո գլխահարկը կրկնապատկվել է։

Պարսից հարկահաններն Անդրկովկասի ինչպես և Երևանի խանությունում աշխատավորության նկատմամբ անսահման բռնություններ ու կամայականություններ են գործադրել։ Երևանի խանի պաշտոնակատար Մուրթուզ-Ղուլի խանը հայերին կողոպտելու դիտավորությամբ հայտարարել է, որ շահի հրամանով Երևանի խանության մեջ գինու գործածումը արգելվում է։ Խանի պաշտոնակատարները կնքել են գինու կարասները։ Խանն իր հրամանը վերացրել է միայն այն ժամանակ, երբ բնակչությունից ստացել է մեծ քանակությամբ կաշառք։ Հարկ վճարելու հնարավորություն չունենալով Մարուգե անունով երևանցուն խանի հարկահանները կախել են տվել աջ ձեռքից և այնքան ծեծել, որ նրա մարմնի բոլոր հոդերը խախտվել են։ Պարսից հարկահանները բռնագրավում էին հարկերը վճարելու հնարավորություն չունեցողների վերջին ունեցվածքը, իսկ այդ էլ չունենալու դեպքում, հարկերի փոխարեն տանում էին նրանց կանանց ու երեխաներին և վաճառում օտար շուկաներում։

Անդրկովկասի աշխատավորության նկատմամբ պարսկական բռնակալների բաղմապիսի ու անսահման կամայականությունների ու բռնությունների մասին բաղմաթիվ փաստեր են բերում 17 և 18-րդ դարերի պատմիչներ՝ Առաքել Դավրիժեցին, Զաքարիա Սարկավագը, Եսայի Ջալալյանը, Խաչատուր Ջուղայեցին և այդ դարերի օտարերկրյա վաճառականները, առանձնապես Տավերնիեն ու Շարդենը, որոնք եղել են Հայաստանում։

Պարսկաստանի տիրապետության մեջ ամենուրեք քրիստոնյաները բռնի դավանափոխության էին ենթարկվում։ Առաքել Դավրիժեցու վկայությամբ Ամիրգունա խանի որդի Թահմազ-Ղուլի բեկը պատժել է նույնիսկ Մելիքսեթ կաթողիկոսին։ Նրան բեկի հրամանով բերել են Երևանի բերդը, պառկեցրել են գետնին, ակցանով պոկել են նրա թևերի մսերն ու դրել են բերանը, փայտի հարվածներով ստիպել են, որ ծամի և կուլ տա և նա ստիպված է եղել կատարել այդ[1]։

Զաքարիա պատմագրի վկայությամբ Երևանի Մահմեդ խանի հրամանով կողոպտվել է էջմիածինը և ֆիզիկական տանջանքների է ենթարկվել հոգևորականությունը[2]։

Անդրկովկասի որոշ վայրերում հայերին իբրև «ստորադրյալներ» ստիպում էին կրծքներին կրել դեղին գույնի հատուկ սահմանված նշան։ Պարսիկ ճնշողներն ընդհանրապես հայերին արժանի չէին համարում նույնիսկ իրենց բարև տալ՝ «սալամ-ալեքում» ասել[3]։

Անդրկովկասի հայ, վրացի և ադրբեջանական եղբայրական ժողովուրդների համար ծանր ու անտանելի արհավիրք էր նաև բռնի կերպով շահերի ու խանների հարեմների համար աղջիկների հավաքումը։ 1699 թվականին Շահ-Հուսեյնի հրամանով Անդրկովկասում, ինչպես և Երևանում աղջիկների հավաք է կատարվում։ Մնողներից բռնությամբ խլված աղջիկների մի մասին ուղարկում են շահին, իսկ մյուսներին վաճառում։ Զաքարիայի վկայությամբ

---

1 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 157—158։

2 Զաքարիա Սարկավագ, Պատմութիւն, հատոր 2-րդ, էջ 49—50։

3 П. Р. Бутков, Материалы для новой истории Кавказа, СПб, 1869, ч. 1, стр. 10.

այդ նույն թվականին Շահ-Հուսեյինն իր հարեմի համար պահանջել է վրաց Գեորգի թագավորի գեղեցիկ աղջկան։ Վրաց թագավորը, որ մինչև այդ նախապատրաստվում էր թոթափել պարսկական ծանր լուծը, հրաժարվում է կատարել շահի հրամանը և այդ առիթով ապստամբում է։ Շահ-Հուսեյինը՝ ապստամբ Գեորգի թագավորին պատժելու համար Վրաստանում եղած պարսից պահակազորին օգնության է ուղարկում մի մեծ բանակ՝ Երևանի, Գանձակի և Նախիջևանի խաների գլխավորությամբ։ Ապստամբությունը դաժանորեն ճնշվում է, իսկ Վրաստանն ավերվում ու կողոպտվում է։

17-րդ դարի վերջին Սեֆյան Պարսկաստանի կենտրոնական կառավարության թուլության հետևանքով երկրում ուժեղանում և ծավալվում են ներքին անկարգությունները։ Իրենց պաշտոններում հաճախակի փոփոխվող պարսիկ խաներն լքաղված էին ժողովրդի հարստահարությամբ։ Խանություններում ավազակությունը, կողոպուտն ու կաշառակերությունը մեծ չափերի էր հասել. «...Բազմացան ավազակք ի ճանապարհի,— գրում է Զաքարիան,— և գողք ի շէնս. վասն այս պատճառի ոչ ոք կարէր գնալ ի ճանապարհ, զի կողոպտէին։ Եւ այսպէս կայր երկիրս ամենայն ի մէջ բազում տառապանաց»[1]։

Այսպիսով Անդրկովկասի ժողովուրդներն իրենց իսկ հայրենիքում դաժանորեն հալածվում և ծայր աստիճանի աղքատանում էին մի կողմից պարսկա-օսմանյան և միջխանական կռիվների, իսկ մյուս կողմից արտաքին ու ներքին բռնակալների տնտեսական ու արտատնտեսական ծանր շահագործման և կողոպուտների հետևանքով։

Ահա այդ պատճառով էլ Անդրկովկասի ժողովուրդներն, այդ թվում և հայ ժողովուրդը, ելք էին որոնում Պարսկաստանի բռնապետության դարավոր ու ծանր լուծը թոթափելու և իրենց կորցրած վաղեմի անկախությունը վերականգնելու համար։ Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները դեռևս վաղ ժամանակներից իրենց ազատագրության հույսը միշտ էլ կապել են ռուս մեծ ժողովրդի հետ։ Այդ կապակցությամբ Միրզաֆար Բագիրովն իրավամբ գրում է. «Թյուրքական և պարսկական զավթիչների դեմ մղած իրենց պայքարում վրացի, հայ, ադրբեջանցի ժողովուրդների և Դաղստանի ժողովուրդների առաջավոր մարդիկ իրենց հայացքն ուղղել են դեպի Ռուսաստան և նրանից օգնություն և աջակցություն փնտրել»[2]։ Անդրկովկասի ժողովուրդների այդ ձգտումներն օբյեկտիվորեն համընկնում էին ցարական Ռուսաստանի տնտեսական և քաղաքական շահերին և այդ պատճառով էլ ցարիզմը նախապատրաստվում և հույս էր ներշնչում Անդրկովկասը Ռուսաստանին միակցելու համար։

Աղվանների կողմից 1722 թ. Պարսկաստանի մայրաքաղաք՝ Իսպահանի գրավումը և այդ պատճառով Պարսկաստանում տեղի ունեցող քաղաքական երկպառակություններն ու Թյուրքիայի կողմից դեպի Պարսկաստան և Անդրկովկաս արշավելու նախապատրաստությունները, Պյոտր 1-ին ստիպում են Պարսկաստանի դեմ արշավանք սկսել 1722 թվականին։

Պյոտր առաջինի պարսկական արշավանքը մեծ հույս է ներշնչում Անդրկովկասի ժողովուրդներին։ Նրանք ամենուրեք ազատագրական ապստամբու-

---

[1] Զ ա ք ա ր ի ա Մ ա ր կ ա վ ա գ, հատ. 2-րդ, էջ 89։

[2] М. Д. Багиров. К вопросу о характере движения мюридизма и Шамиля. Большевик, № 3, 1950, стр. 35.

թյան դրոշ են բարձրացնում պարսկական քայքայվող բռնապետության դեմ։ Մյուս կողմից մեծ աղմուկ է բարձրացվում Թյուրքիայում։ Թյուրքիան, որ իրեն պարսկական կալվածների ժառանգորդ էր հայտարարել և նպատակադրել էր տիրել Պարսկաստանը և Անդրկովկասը, ոտքի է կանգնում։ Կ. Պոլսում Եվրոպական մի շարք պետությունների դեսպանություններ, առանձնապես անգլիական դեսպանությունը, ելնելով իրենց երկրների նվաճողական շահերից, Թյուրքիային հրահրում են Ռուսաստանի դեմ պատերազմի, խոստանալով նրան իրենց պետությունների օժանդակությունն ու օգնությունը[1]։

Թյուրքական զորքը՝ շտապում է մտնել Անդրկովկաս՝ ռուսական զորքերի առաջխաղացումը դեպի Պարսկաստան կանգնեցնելու նպատակով։ Էրզրումի փաշան հրաման է ստանում արագ կերպով ավարտել պատերազմի նախապատրաստական աշխատանքները։ Դարերով ճնշված Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները, ոգևորված ռուսական զորքերի առաջխաղացումից, կազմակերպում են ապստամբության շորս օջախներ, Քարթիում, Ղարաբաղի Մոավ և Քիս լեռների շրջանում (Մեծ և Փոքր Սղնախներում) և Սյունիքում։

1723 թ. վերջին օսմանյան բանակն Իբրահիմ փաշայի հրամանատարությամբ անցնելով Վրաստանի սահմանները, նվաճում է Կախեթին և Քարթլին։ 1724 թվականին Մուստաֆա փաշայի զորքերը գրավելով Գանձակը ներխուժում են Լեռնային Ղարաբաղի սահմանները։ Նույն թվականի գարնանը Ահմեդ փաշան Դիարբեքիրից 30 հազարանոց բանակով մուտք է գործում Պարսկաստան և Երևանի խանության հարավային սահմանները, իսկ օսմանյան մի ուրիշ բանակ՝ Քոփրուլու Աբդուլլահ-փաշայի ընդհանուր հրամանատարությամբ Էրզրումից շարժվում է դեպի Երևան՝ Արևելյան Հայաստանը ու Հյուսիս-Արևելյան Պարսկաստանը նվաճելու համար։

Երևանի և Արարատյան դաշտի բնակչության առաջ ծառանում է լուրջ ու պատասխանատու խնդիր՝ պաշտպանել հայրենի երկրի կենտրոն Երևանը օսմանյան բարբարոսների ավերումներից, արգելակել օսմանցիների առաջխաղացումը դեպի ազատագրված Սյունիքն ու Ղարաբաղը և դրանով իսկ նպաստել ամբողջ Արևելյան Հայաստանի ազատագրության գործին։

Օսմանյան նվաճողների դեմ Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների համատեղ պայքարը, հայ ազատագրական շարժումների հաջողությունները և Ռուսաստանի օգնության հույսը, ոգևորում և մինչ չտեսնված եռանդ են ներշնչում երևանցիներին՝ օսմանյան զավթիչների դեմ մղվող պայքարում։

Աբդուլլահ փաշայի հրամանատարությամբ գործող օսմանական զորքերը կենտրոնանում են արևմտյան Արփաչայի (Ախուրյանի) ափերին, իսկ նրանց առաջավոր ջոկատները Ելդուզ-Հասանի ու Ղոչ-Ալու գլխավորությամբ առաջ են շարժվում դեպի Երևան։ Աբդուլլահ-փաշան հատուկ մարդ է ուղարկում Էջմիածնի կաթողիկոսի մոտ և սպառնում է նրան, պատճառաբանելով թե հայերն են ռուսներին բերել Կովկաս, թե հայերը իրենց դեմ 60 հազար զինված մարդ են պատրաստել և այդ բանը նրանց էժան չի նստի[2]։

Երևանից ոչ հեռու Եղվարդ ավանի մոտ Երևանի Միհրալի-խանի զորքերը և օսմանյան առաջավոր ջոկատներն ընդհարվում են, որտեղ պարտության մատնվելով, Միհրալի-խանը նահանջում և ամրանում է Երևանի բերդում,

---

[1] История дипломатии, т. I, Москва, 1941, стр. 271.

[2] Ժամանակագրութիւն, Պետրոս դի Սարգիս Դիլանենցի, Կոստանդնուպոլիս, 1863, № 3։

անպաշտպան թողնելով Երևանի ամբողջ նահանգը։ Շրջակա գյուղերի ու ագարակների բնակիչները փախչում և պատսպարվում են Երևանում։ Կարբի գյուղաքաղաքի տակ Աբգուլլահ-փաշան միանալով իր առաջավոր ջոկատներին, գրավում է Կարբին և առաջ շարժվելով, գալիս շրջապատում է Երևանը։

Միհրալի-խանն իր հետ վերցնելով պարսիկ և հայ հարուստ մեծամեծներին, իրենց ընտանիքներով, փակվում է բերդում և սկսում բերդից պաշտպանվել, քաղաքի պաշտպանությունը թողնելով Երևանի աշխատավոր բնակչությանն ու շրջակա գյուղերից Երևան գաղթած գյուղացիներին։

Երևանում ապաստան գտած աշխատավորությունը երկու ամիս շարունակ՝ Հունդիբեկյան Հովհաննեսի, Քիչիբեկյան Պողոսի, Կարճիկ Հովհաննեսի, Միրզաջանյան Դավթի և ուրիշների ղեկավարությամբ անհավասար հերոսամարտերում պաշտպանում է Երևանը և մեծ կորուստներ պատճառում թշնամուն։

Աբգուլլահ փաշան չկարողանալով գրավել Երևանը, օգնության է կանչում Թյուրքիային ենթակա մուսուլման քրդերին և նրանց օգնությամբ նորից է վերսկսում գրոհները, բայց կրկին ետ է շպրտվում։ Նկատի ունենալով հայերի հերոսական պաշտպանությունը և իր զորքերի մեծ կորուստները, թյուրքական զորքերի գլխավոր հրամանատար՝ Աբգուլլահ-փաշան հատուկ զեկուցագրով դիմում է սուլթանին. «Բազում են զօրք քաղաքիս, և ի մէնջ անկան բազումք, զինչ արդօք հրամայես առնել. առաքեա մեզ զօրս ի թիկունս և կամ հրաման տաս դառնալ յետս»։

Սուլթանի հրամանով՝ Քոդահիայի փաշան 10 հազարանոց բանակով օգնության է հասնում Աբգուլլահ փաշային, որը վերսկսում է հարձակումը։ Քաղաքում գտնվող պարսիկները խանի գլխավորությամբ՝ նորից փախչում և ամրանում են բերդում, իսկ հայ զորախմբերը կազմակերպում են քաղաքի հերոսական պաշտպանությունը[2]։

Հարձակվող թշնամին սկզբում որոշ հաջողություններ է ունենում, նա անցնում է Զանգու գետը և մոտենում քաղաքին, բայց շուտով հայերը կատաղի մարտերում կանգնեցնում են թշնամու առաջխաղացումը և նրան ետ շպրտում իր նախկին դիրքերը։ Չնայած դրան, Երևանի հայ պաշտպանների համար ստեղծվում է ծանր դրություն։ Թվով մի քանի անգամ գերազանցող թշնամին չէր դադարեցնում կատաղի հարձակումները։ Հայ զորագնդերի հրամանատարները հավաքվում են Զորագյուղ թաղի ս. Սարգիս եկեղեցում՝ խորհրդակցության։ Խորհրդակցությանը մասնակցում են նաև Կոնդի թաղում ապրող հայ բոշաների պետերը՝ Ղազարոս Բաբուրյանը, Կլդուզն, Դավիթը, Բեյրամը և Պետրոսը։ Խորհրդակցությանը մասնակցողները հայտնում են իրենց պատրաստակամությունը՝ թշնամու դեմ մարտնչել մինչև վերջին շունչը։

Առաջինը խոսում է Ղազարոսը և ասում. «Ահաւասիկ ես զերկու հարիւր բաջամարտիկ երիտասարդս ունիմ, որոց ամենեքեան ունին զզենս և վարժք են սրոյ և հրացանաց արձակելոց։ Զնոսա ես ժողովեցի նոքոք հանդերձ ոգւով չափ պատերազմացոյց»[3]։

Ղազարոսից հետո խոստումներ են տալիս մյուս զորապետները՝ Հունդիրեգյան Հոհանը, Փիրիգալը, Ազումբեկը, Թադեոսը, Սղունը, Մկրտիչը, Մալ-

---

[1] Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, Երևան, 1938, էջ 14—15։
[2] Նույն տեղում, էջ 15։
[3] Նույն տեղում, էջ 16։

խասը, Նիկողայոսը, Սրապիոնյան Ավետիսը, Աղուզատեն, Նուրին, Զոհրապը, Ալեքսանը, Աղումը, Գալուստը և Երամը։

Խորհրդակցությունից հետո զորապետները Երևանից և Երևանի շրջակա գյուղերից՝ Փարաքարից, Գուգումբերից, Կավակերտից, Արինջից, Ավանից, Զագավանից, Զաղայից, Նորագյուղից Երևան գաղթած գյուղացիներից հավաքում են ընտիր մարտիկներ՝ թվով մոտ 10 հազար հոգի։ Երևանի հին թաղի, այսինքն հին Երևանի զորախմբերի հրամանատարներն էին Նիկողայոսը, Մարիամի որդի Անտոնիոսը, Խաթունի որդի Բութիկը և Տեր-Մովսեսը։

Սրերով, սուսերներով զինված հայ զինվորները համախմբվում են Զորագյուղում, բաժանվում առանձին զորագնդերի և քաղաքի պաշտպանության համար ուղարկվում տարբեր թաղեր։

Քաղաքի շուրջը գտնվող այգիները, հին ժամանակներից քաղաքի պաշտպանության նպատակով խիտ տնկված ուռենիները և Զանգու գետը նպաստում են քաղաքի պաշտպանությանը։ «Զի շուրջ քաղաքաւն էին այգիք և ծառատունկք ուռեաց բազում խիտք,— գրում է Աբրահամ Երևանցին,— զորս ի վաղ ժամանակաց տնկեալք էին լինիլ ի պահպանութիւն, ի պատսպարութիւն քաղաքին»[1]։

Երբ հայերն այսպիսի պատրաստության մեջ էին, թյուրքական հրամանատարությունը Եգիպտոսից երեք հազար մարդուց բաղկացած լրացուցիչ զորք է ստանում, որը առանց գլխավոր հրամանատար՝ Աբդուլլահ-փաշայի հրամանի՝ Զորագյուղի ուղղությամբ հարձակվում է։ Նրան հետևում են օսմանյան մյուս զորագնդերից մի քանիսը։ Եգիպտոսից եկածները կարծում էին, որ միայն իրենց ուժերով կարող են քաղաքը գրավել, առանձնահատուկ փառքի արժանանալ և առաջինը տիրել հարուստ ավարին։

Զորագյուղի հայ պաշտպանները չդիմանալով թշնամու գերազանց ուժերի ճնշմանը, նահանջում են մինչև Աղորայից (Զրաղացների) թաղը։ Այդ ժամանակ Զորագյուղի մարտիկներին օգնության են հասնում հայ բոշաների ջոկատները։ Կռիվը կատաղի բնույթ է ստանում, թշնամին կռվի դաշտում թողնելով 6000 սպանված, խուճապահար նահանջում է իր նախկին դիրքերը։ Այդ կռվում հայերը կորցնում են 1300 մարտիկ։

Օսմանցիների և երևանցիների այդ ճակատամարտի մասին՝ բացի մեր միակ պատմիչ Աբրահամ Երևանցու հաղորդումից, կան նաև այլ տվյալներ։ Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 7903 ձեռագրի, որ ունի «Պատմութիւն արիական տանն Մամիկոնեից և հիշատակագրութիւն դիւցազնական շահատակութեանց նոցա» խորագիրը, 23-րդ գլխում, հեղինակը՝ Մահտեսի որդի Մարտիրոսը, խոսելով Երևանի 1724 թ. պաշտպանության մասին, գրում է. «Եւ ժամանակաց եկեալ զօրքն օսմանցոց պաշարեն քաղաքն Երևանի և ի նմանէ հատուածեալ զօրքն եգիպտացւոց մտանեն ի խրամ քաղաքին և ի միջի պարսպին և բերդին կոտորին ի յԵրևանցւոց»[2]։

Աբդուլլահ-փաշան նկատի ունենալով իր զորքերի այդ մեծ կորուստը հրամայում է, որ ոչ մի զինվոր այլևս առանց իր հրամանի առաջ չշարժվի։

Հակառակ թյուրքական սուլթանի շտապելուն, Աբդուլլահ-փաշան հապաղում է, Երևանը չի կարողանում գրավել։ Ահա այդ պատճառով սուլթանը

---

[1] Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, Երևան, էջ 17։
[2] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, ձեռագիր № 7903, էջ 50ա։

հրամայում է Սարու-Մուստաֆա և Ռաջաբ փաշաներին 38 հազարանոց զորքով օգնության հասնել Աբդուլլահ-փաշային և անհապաղ նվաճել Երևանը։ Մինչև Մուստաֆա և Ռաջաբ փաշաների հասնելը Աբդուլլահ-փաշան որոշում է մի անգամ ևս փորձել դրավել Երևանը և իրեն վիճակված փառքը չբաժանել նրանց հետ։

Այս անգամ օսմանական զորքերը հարձակումը սկսում են Կոնդի ուղղությամբ։ Հայկական գնդերը կենտրոնանում են Կոնդում. թշնամին մեծ կորուստներով նորից ետ է շպրտվում և այլևս չի համարձակվում հարձակվել մինչև օգնական զորքի հասնելը։

Օգնական զորքը հասնելուց հետո Աբդուլլահ-փաշան վերսկսում է հարձակումը Երևանի վրա՝ այս անգամ բոլոր կողմերից և առանց հարձակողական թափը թուլացնելու։ Երևանի հերոս պաշտպանները կատաղի դիմադրություն են ցույց տալիս թյուրք ղավթիչներին։ Արյունալի մարտերը տևում են ամբողջ օրը։

Այդ օրվա մարտերը Աբրահամ Երևանցին հետևյալ կերպ է նկարագրում. «Եւ եղև. ի վաղիւ անդր, որ օրն էր ուրբաթ, զօրքն օսմանցւոց ի չորս առաջս բաժանեալ մխեցան ի քաղաքին ի չորից կողմանց։ Եւ մարտ եղեալ յառաւօտ, մինչև ցերեկոյ սոքա աստի, և նոքա՝ անտի, խառնեցան ընդ միմեանս հայքն և օսմանցիքն. և այնչափ եղև հեղումն արեան, մինչև կարմրանալն Զանգու գետոյն և երկրին, որ առ դետովն. և հոդ արեանց և դիականց կոտորելոցն քաղաքն բովանդակ մինչև ի հեռաւոր տեղիս լցին»[1]։

Թշնամու ուժերի խիստ գերազանցության պայմաններում, չնայած հայերի հերոսական ու անձնազոհ պաշտպանությանը, Աբդուլլահ-փաշային հաջողվում է երկու ամիս տևող արյունահեղ մարտերից հետո և ավելի քան 15,000 թյուրքական զինվորների արյան գնով 1724 թվականի հունիսի 7-ին դրավել Երևանը։

Քաղաքը նվաճելուց հետո բերդում փակված Միհրալի խանը, Շահ-Թահմազից օգնություն ստանալու հույսը կորցնելով, Էջմիածնի կաթողիկոս Աստվածատուրի միջոցով բանակցություններ է սկսում Աբդուլլահ փաշայի հետ, իրենց կյանքի պահպանության պայմանով բերդը թյուրքերին հանձնելու համար։ Համաձայնությունը կայանում է, բերդը հանձնվում է, Միհրալի խանը յուրայինների հետ հանձնվում է Աբդուլլահ-փաշայի ողորմածությանը։

Թյուրքական բարբարոսներն իրենց տրադիցիոն սովորության համաձայն Երևանում և Երևանի գավառում սարսափելի կոտորածներ ու ավերածություններ են գործում, բնակչությանն անխնա կողոպտում են, խոշտանգում և գերեվարում։

Երևանում օսմանցիների կատարած ոճրագործությունների մասին Աբրահամ Երևանցին գրում է. «...Կոտորեցան հզօրքն հայոց ի սուր սուսերի և գետահեղձ եղեն բազումք ի նոցանէ։ Ի դերութիւն վարեցին օսմանցիքն զկանայս նոցա և զմանկունս և տարեալ լցին զնոսա ի բանակս իւրեանց և չար գործովք ապականեցին զնոսա»[2]։ Աբրահամ Երևանցու այս վկայությունը հաստատում է դեպքերին նույնպես ժամանակակից Սյունիքի 1722—1730 թթ. հայ ազատագրական շարժումների պատմիչ՝ Ստեփանոս Շահումյանը։ Նա

[1] Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, Երևան, էջ 21։
[2] Նույն տեղում։

գրում է. «Արդ սոքա (օսմանցիները) իբրև այսպէս զօրացն ի կողմանս յայնոսիկ, և զմայրաքաղաքն Երևանայ յետ բազում ժամանակաց պաշարմանն առին, և զամենայն բնակչացն ի սուր սուսերի մաշեցին»[1]։

Երևանում և Երևանի գավառում օսմանցիների կատարած այդ բարբարոսությունների վերաբերյալ մեր պատմիչների վկայությունները հաստատվում և լրացվում են նաև ժամանակակից մարդկանց կողմից գրված հիշատակագրությունների, ժամանակագրությունների և այլ փաստաթղթերի տվյալներով։ Ավետիսի 12-ամյա որդի Հակոբը 1724 թ. իր գրած հիշատակագրում այդ մասին հայտնում է. «...Գիրքս դրեցի ի խնդրոյ հօրըն իմոյ, որ կոչի Գալուստի որդի Աւետիս դպիր, ի տղայ հասարակութեան ԲԺ (երկոտասան) ամեայն ի թվին ՌՃՀԳ-ին յամսեանն օգոստոսի դառըն և դժընդակ ժամանակի, որ գնացին օսմանցիքն ի վերայ էճէմիստանու պատերա(ղ)մն և առին Թիֆլիզ և Խոյ և Երևանու երկիրն և առին ի նոցանէ բազում գերիս հայք և տաճիկք անթիւ և անհամար, որ ոչ գրով կարենք գրել և ոչ լեզուով ճառել բայց ևս ի վերայ նորայ պատերազմի են զապագայն ոչ գիտեմք թէ զինչ կու լինի»[2]։

Այդ նույն ձեռագրի մի այլ հիշատակարանում հիշատակագիր Հակոբն ավելացնում է. «...Այսմ ամի օսմանցիքն Երևան քաղաքն առին և բազում արիւնս հեղին անմեղացն եւ անթիւ գէրիս գերեցին՝ հայոց և տաճկաց[3]։

Ժամանակագիր Մարտիրոս Դի Առաքելն իր ժամանակագրության մեջ գրում է. «Արդ՝ ի սոյն թվ. (1724) ևս զօրք օսմանցոց ելին ի վերայ Երևանայ։ Եւ պատերազմեցին յոյժ սաստիկ, ապա կամաւ ետուն զբերդն։ Եւ մինչդեռ գային զօրքն պարսից ի վերայ Երևանայ, մտին զօրքն օսմանցոց ի շրջագա(յ) գաւառս նորա և ողորմելի ազգէս հայոց բազումս կոտորելով, գերեցին բազում անձինս յոյժ»[4]։

Հովակիմ դպիրը 1725 թվականին իր գրած հիշատակարանում խոսելով Անդրկովկասում օսմանցիների կատարած նողկալի արարքների մասին գրում է. «Իսկ որդիքն Իսմայէլեանցն,— գրում է Հովակիմ դպիրը,— ցեղքն օմարեան տիրողքն Բիւզանդիոյ և յամենայն տանն յունաց. յորժամ լուան զիրս եղելոցն որ գործեցաւ ի պարսիկս և ի հայս և որոնեալ իմացաւ զամայութիւն և զանիշխանութիւն տանն հայոց։ Յայն ժամ ձայն տուեալ միմեանց, ի սադրելոյ արքային իւրեանց, որ ի Կոստանդինուպոլիս. զօրս կուտակեցան և յոգնահանդէս խումբ կառուցան զինուք և սուսերօք արեանարբոյ և խստասրտիւք արամբք երկդիմի գազանօք անթիւ և անքանակ հեծելազօրօք բարկութեամբ և դառնութեամբ սաստկութեամբ և զայրացմամբ հասին ի վերայ բազմավէր և ցաւալից տանցն հայոց, վրաց և պարսից։ Առին զՏփխիս քաղաքն վրաց աւարաւ և գերութեամբ և յետ առնելոյն զվիրս յարեն զայրացմամբ ի վրա տանն Արարատու։ Ճակատ առ ճակատ պատերազմունս մղելով ընդ դէմ հողաշէն և բարձրաբերձ ամրոցին և դղեկին Երևանայ, իսկ ազգն պարսից հօժարութեամբ իւրեանց ոչ

---

[1] Ստեփանոս Շահումյան, Ընտիր պատմութիւն, Դաւիթ-Բեգին, եւ պատերազմացն հայոցն Խվանու, որք եղէն ընդդեմ Թուրքաց ի մերում ժամանակի. յայնէ յամի տեառն 1722, և հայոց 1171, Վաղարշապատ, 1871, էջ 43։

[2] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, ձեռագիր № 843, էջ 38ա, 38բ։

[3] Նույն տեղում, էջ 61ա։

[4] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, ձեռագիր № 1784։ Տես նաև Պետական Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, № 1, Ա. Աբրահամյանի «Մարտիրոս Դի Առաքելի ժամանակագրությունը», էջ 99։

էտուն զբերդն, այլ ընդդիմութեամբ մաքառեալ ամրացեալք ի դղեկի ընդ դէմ կացեալ ազդին հզօրաց... տալով ամիսս երիս աւելի և կամ պակաս։ Բայց յետոյ նքրտեալ ի սովու ետուն զամրոցն իւրոց ազգին Իսմայէլեան, և հնազանդեցան նոցա. քանզի անտերացեալք էին և ոչ ոք էր որ հասանէր ի թիկունս կոյս առ ի օգնել և կամ ազատեալ զնոսա ի ձեռաց օտար թշնամեաց։

Եւ ի մրրկամպ մառախլապատ ժամանակին յորում ոչ էին առեալ զբերդն զայրացմամբ ու բարկութեամբ զինուք և սուսերօք յարեան ի վերայ քաղաքին և ամենայն տանն Արարատու և Ո կարողասցի բաւել զանչափութիւն աղետիցն ողբոց և աղաղակացն քանզի հասեալ էր ի վերա նոցա ամպն կարկրտաբեր որով տեղաց ի ծաղկափայլ և ի նորաբողբոջ բուրաստանս սրբոց լուսավորիչին։ Ուստի սուր ի վրայ եղեալ անողորմաբար առհասարակ կոտորեցին զրնակիչս երկրին այնմիկ վարդապետք և քահանայք սարկաւագունք և եկեղեցականք, իշխանք և իշխեցեալք, մեծամեծք և փոքրունք, անմեղք և մեղանչականք, հայք և պարսիկք»[1]։

Արևելյան Հայաստանում օսմանցիների կատարած բարբարոսությունների մասին խոսվում է նաև 1726 թ. մարտի 24-ին Մխիթար բեկի և Սյունիքի մի շարք այլ յուզբաշիների կողմից Ռուսական կառավարությանը գրած ուղերձի մեջ։ Ուղերձում այդ մասին ասված է. «...Օսմանցիքն բազմահոյլք հոլովազօրք եկին ջարմակայ գլուխքն. բազու(մ)ք քաղաք, վանք, անապատք, գեղորանք առան տիրեցան, և քրիստոնեաք անխնայապար կոտորեցին։ Զի անչափ անիրավութիւն առնէին, որ երկու տարեկան, մէկ տարեկան և կէս տարեկան աղջկունք երեխէք առեալ տանէին ի մօրց կրկէն առ յաչս մօրն սրախողխող առնէին. (և) մայրքն կերի առեալ (ա)ւար առնէին. և եկեղեցիք ձիանք կապեին՝ թալա շինէին, խաչ և սրբութիւնք ջարթէին, կուս աղջկունք ի մէջ եկեղեցու պղծէին, զի այնպես անառակ բան առնէին, որ ոչ է պարտ ասելն և կամ ձառելն, զի ոչ է պարտ քրիստոնէից լսելն»[2]։

Երևանը նվաճելուց հետո վեց տարի շարունակ մղվող համառ ու արյունահեղ կռիվներում օսմանական բարբարոս զորքերը դաժանորեն ճնշեցին նաև Սյունիքի և Ղարաբաղի հայ ազատագրական շարժումները և Հայաստանի, ինչպես նաև Անդրկովկասի մեծագույն մասի վրա հաստատեցին իրենց դաժան տիրապետությունը։ Դրան շուտով հաջորդեց պարսկա-օսմանյան արյունահեղ նոր պատերազմների մղձավանջը։

Երևանի 1724 թվականի հերոսական պաշտպանության պարտությունից և Սյունիքի ու Ղարաբաղի հայ ազատագրական շարժումները ճնշվելուց հետո, ազատասեր հայ ժողովուրդն Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների հետ միասին ոչ միայն չթուլացրեց, այլ էլ ավելի ուժեղացրեց իր պայքարը թյուրք-պարսկական զավթիչների դեմ հանուն իր հայրենիքի ազատության ու անկախության։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, ձեռագիր № 2121, էջ 367բ, 368ա։

[2] П. Арутюнян, Послание Мхитар-бека русскому правительству, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակագիտական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագիր», № 3, 1952, էջ 98—99։